Հաստատված է՝
«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան»
հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի 2015թ.
դեկտեմբերի 22-ի նիստում
Արձանագրություն № _04__
Խորհրդի նախագահ՝

Տ. Մարգարյան

ԿԱՐԳ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամին (այսուհետ համալսարան) սեփականության իրավունքով պատկանող օգտագործված տրանսպորտային միջոցների (այսուհետ օգտագործված տարնսպորտային միջոցներ) օտարման առանձնահատկություններն ու կարգը:
2. Համալսարանի օգտագործված տրասնպորտային միջոցների օտարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, համալսարանի կանոնադրությանը, «Համալսարանի գույքի տնօրինման մասին» կարգին և այլ իրավական ակտերին համապատասխան:
3. Սույն կարգը կիրառվում է միայն համալսարանի օգտագործված տրանսպորտային միջոցների օտարման դեպքերում:

II. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՕՏԱՐՈՒՄԸ

4. Համալսարանին պատկանող օգտագործված տրանսպորտային միջոցների օտարումը թույլատրվում է համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:
5. Տրանսպորտային միջոցները օտարման ներկայացնելու հիմք են հանդիսանում տեխնիկական վիճակի ցուցանիշները, տրանսպորտային միջոցի վերանորոգման կամ

վերականգնման տնտեսական նպատակահարմարությունը և հետագա շահագործման ծախսատարությունը:

6. Օգտագործված տրանսպորտային միջոցներն օտարվում են աճուրդի միջոցով՝ համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծված հանձնաժողովի եզրակացության հիման վրա:
7. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝

ա)Համալսարանի տնտեսական և շինարարական աշխատանքները համակարգող պրոռեկտորը (հանձնաժողովի նախագահ),

բ) ավտոտնտեսության ղեկավարը,

գ) ծրագրերի տրանսպորտային միջոցների շահագործման պատասխանատու անձը

դ)գլխավոր հաշվապահը,

ե)անկախ գնահատող մասնագետներ:

8. Հանձնաժողովը՝

1) Կատարում է համալսարանի՝ օգտագործված տրանսպորտային միջոցների անմիջական զննում և ելնելով տրանսպորտային միջոցի փաստացի տեխնիկական վիճակից՝ եզրակացություն է տալիս՝

ա) օտարվող տրանսպորտային միջոցի ամբողջական պիտանիության աստիճանի և վերականգնման հնարավորության մասին,

բ) տրանսպորտային միջոցը շահագործումից հանելու ստույգ պատճառների՝ մաշվածության, վնասվածության, համալսարանի հետագա կարիքների համար օգտագործման հնարավորության, հետագա շահագործման ծախսատարության մասին:

2) Կազմում է այն տրանսպորտային միջոցների ցանկը, որոց շահագործումը համալսարանի հետագա կարիքների համար նպատակահարմար չեն և կարող են ներկայացվել օտարման՝ աճուրդային կարգով:
3) Մասնակցում է աճուրդի գործընթացին:
4) Համալսարանի ռեկտորին է ներկայացնում օտարման ենթակա տրանսպորտային միջոցների ցանկը:
9. Օտարման ենթակա տրանսպորտային միջոցների ցանկում նշվում են տրանսպորտային միջոցների մակնիշը, արտադրման տարին, ամիսը, ամսաթիվը, համալսարանի կողմից ձեռքբերման (շահագործման հանձնման), տարեթիվը, տեխնիկական վիճակը, ավտոմեքենայի վազքը, սկզբնական արժեքները (գինը), հաշվեկշռային և վերագնահատման գինը՝ արտահայտված դրամով և այլ տվյալներ:
10. Օգտագործված տրանսպորտային միջոցները համալսարանի հետագա կարիքների համար օգտագործման անհնարինության մասին եզրակացությունը և օտարման վերաբերյալ ստացված նյութերը նախապես քննարկվում է համալսարանի ռեկտորատում և դրա որոշման հիման վրա ռեկտորի հրամանով դադարեցվում է օտարման ենթակա տրանսպորտային միջոցների շահագործումը և դրանք ներկայացվում աճուրդի:
11. Համալսարանի օգտագործված տրանսպորտային միջոցների օտարման գինը որոշվում է մնացորդային արժեքով՝ համալսարանի հաշվապահության կողմից՝ ելնելով փաստացի

տեխնիկական վիճակից, իսկ վաճառքի մեկնարկային գինը՝ ոչ պակաս դրանց վերագնահատված արժեքի 20% -ից:

12. Օտարման ենթակա տրանսպորտային միջոցների ծառայության ժամկետը որոշվում է հաշվարկային եղանակով, հիմք ընդունելով ծառայության ընթացքում ամորտիզացիայի ֆոնդի կուտակումով շարժակազմի նախնական արժեքի 90%-ի չափով (10%-ը պետք է կազմի տրանսպորտային միջոցի մնացորդային արժեքը):

III. ԱՃՈՒՐԴԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

13. Համալսարանի՝ օգտագործված տրանսպորտային միջոցները օտարվում են փակ աճուրդով: Փակ աճուրդին մասնակցում են միայն համալսարանի հիմնական աշխատողները: Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող աշխատողները հանձնաժողովին ներկայացնում են հայտ (ձև 1) մինչև աճուրդի անցկացման նախորդ օրը, աշխատանքային օրերին՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ն:

Աճուրդին չեն կարող մասնակցել աճուրդավարի և նրա կնոջ մերձավոր հարազատները:

14. Եթե համալսարանի աշխատողներից ոչ մեկը ցանկություն չի հայտնել համալսարանի օգտագործված տրանսպորտային միջոցի աճուրդին մասնակցելու հայտ ներկայացնել, հայտարարվում է նոր աճուրդ, կամ համալսարանի ռեկտորի որոշմամբ տրանսպորտային միջոցը կարող է սահմանված կարգով օտարվել համալսարանի աշխատողներին կամ այլ անձանց կամ բաց աճուրդով:

15. Աճուրդն իրականացնում է համալսարանը՝ որպես կազմակերպիչ՝ համալսարանի ավտոտնտեսության միջոցով: Համալսարանի ռեկտորի հրամանով նշանակվում են աճուրդի կազմակերպիչ և աճուրդը վարող՝ աճուրդավար:

16. Աճուրդի կազմակերպիչն աճուրդն անցկացնելու մասին հրապարակում է ծանուցում (հայտարարություն): Ծանուցումը հրապարակվում է աճուրդն անցկացնելուց առնվազն 15 օր առաջ:

17. Աճուրդի անցկացման մասին ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը.

2) աճուրդի կազմակերպիչի անվանումը.

3) աճուրդի կազմակերպման վայրը (հասցեն).

4) աճուրդի ձևը և անցկացման կարգը.

5) աճուրդի պայմանները, այդ թվում՝ լոտի (լոտերի) անվանումը, լոտի նկատմամբ սահմանափակումները, լոտի առարկայի ֆիզիկական վիճակը (մաշվածությունը), արտադրման տարեթիվը, լոտի մեկնարկային գինը, մասնակիցների հայտերի ընդունման ժամկետը, այլ պայմանները.

6) աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

7) աճուրդում հաղթողին որոշելու կարգը.

8) կազմակերպիչի կողմից սահմանված նախնական գնի և նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները.

9) լոտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը.

10) մեկից ավելի լոտ վաճառելու դեպքում՝ լոտերի վաճառքի հերթականությունը.

11) աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը:

12) Աճուրդում հաղթողի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման ժամկետները:

18. Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդի անցկացման մասին ծանուցման մեջ նշված չափով, ժամկետներում և կարգով համալսարանի հաշվին մուծում են նախավճար՝ աճուրդում վաճառվող լոտի գնի 5 տոկոսի չափով: Աճուրդը չկայանալու դեպքում նախավճարը վերադարձվում է: Նախավճարը վերադարձվում է նաև աճուրդում չհաղթած մասնակիցներին:

19. Փակ աճուրդի մասին ծանուցումը հրապարակվում է ներհամալսարանական լրատվության միջոցով: Աճուրդի կազմակերպիչը՝ համալսարանը, աճուրդի կայացման վայրում ցուցատախտակի վրա զետեղում է աճուրդի մասին ծանուցումը՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ:

20. Նախավճարը վճարած մասնակցին աճուրդի կազմակերպիչը տրամադրում է վկայական, որտեղ նշվում է աճուրդի կազմակերպչի անվանումը, վճարված նախավճարի չափը, աճուրդի անցկացման վայրը (հասցեն) և ժամանակը:

21. Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր: Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:

22. Նախքան աճուրդի բացումը, մասնակիցները պետք է հնարավորություն ունենան ծանոթանալ աճուրդի մասին ծանուցման մեջ նշված վաճառվելիք լոտին (լոտերին):

23. Լոտն ուսումնասիրվում է տրանսպորտային միջոցների գտնվելու վայրում: Համալսրանը ծանուցման պահից պարտավոր է հնարավորություն ընձեռել լոտի (լոտերի) ուսումնասիրման համար:

24. Վաճառվող Տրանսպորտային միջոցների ուսումնասիրման համար աճուրդի կազմակերպիչը նախատեսում է համապատասխան օրեր և ժամեր ու նշված ժամանակահատվածում ապահովում է լոտի (լոտերի) ամբողջական ուսումնասիրման հնարավորությունը ցանկացողների համար:

25. Լոտի (լոտերի) ուսումնասիրման համար ընդհանուր ժամաքանակը չի կարող պակաս լինել տասը ժամից:

26. Աճուրդի բացմանը նախորդող երեք օրվա ընթացքում համալսարանը աճուրդից հրաժարվելու դեպքում պարտավոր է հատուցել մասնակիցների կրած իրական վնասը:

27. Նախքան աճուրդի սկսվելը կազմակերպիչը գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթեր:
28. Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Աճուրդավարը հրապարակում է աճուրդում վաճառվելիք լոտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի յուրաքանչյուր քայլի գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:
29. Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտ: Յուրաքանչյուր լոտի գինը սահմանվում է մեկնարկային գնի 2%-ի (երկու տոկոս) չափով: Աճուրդում հաղթող է ճանաչվում ավելի բարձր գին առաջարկած անձը:
30. Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո համարվում է աճուրդում հաղթած մասնակից:
31. Աճուրդը համարվում է չկայացած, եթե.
    1) աճուրդի հաղթողը սահմանված ժամկետում չի կատարել վճարումը և հրաժարվել է տրանսպորտային միջոցը ձեռք բերելուց,
    2) աճուրդին չի ներկայացել ոչ մի գնորդ:
32. Աճուրդը չկայացած համարվելու դեպքում հաջորդ աճուրդի պայմանները, այդ թվում՝ մեկնարկային գինը, կարող են փոփոխվել:
    Այդ դեպքում տվյալ լոտի գինը իջեցվում է ոչ ավել, քան 50% -ով և ոչ պակաս, քան 10%-ով, իսկ մի քանի աճուրդների դեպքում՝ յուրաքանչյուր աճուրդի համար՝ ոչ ավել, քան 10%-ով:
33. Յուրաքանչյուր հաջորդ աճուրդ կազմակերպվում և անցկացվում է սույն կարգով սահմանված կանոններով:
34. Լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր կարող է ճանաչվել շահագրգիռ անձի պահանջով, միայն դատական կարգով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում: Լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:
35. Աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում նոր աճուրդը կազմակերպվում և անցկացվում է սույն կարգով սահմանված կանոններով:
36. Լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում նոր աճուրդի պայմանները կարող են փոփոխվել, եթե աճուրդի անվավերությունը կապված է եղել նախնական որևէ պայմանի հետ, ինչպես նաև եթե տեղի է ունեցել լոտի վիճակի փոփոխություն, այդ թվում՝ կապված դրա վերաբերյալ իրավունքների և պարտականությունների փոփոխման հետ:

IV. ԱՃՈՒՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

37. Աճուրդի կայանալու կամ չկայանալու դեպքերում արդյունքների մասին կազմվում է արձանագրություն:
38. Կայացած աճուրդում լոտի (լոտերի) վաճառքից հետո աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը (ձև 2) ստորագրում են հաղթողը և հանձնաժողովը, որով տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված: Չկայացած աճուրդի մասին արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի անդամները:
39. Աճուրդում հաղթած անձի կողմից արձանագրությունը ստորագրելուց խուսափելու դեպքում մուծված նախավճարը չի վերադարձվում:
40. Աճուրդի արդյունքների մասին արձանագրության մեջ նշվում են՝
   1) աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և ժամանակը.
   2) լոտի անվանումը, լոտի վերաբերյալ իրավունքներն ու պարտականություններ , սահմանափակումները, ինչպես նաև լոտի վիճակը (արտադրության տարին, ֆիզիկական մաշվածության աստիճանը և այլն).
   3) լոտի մեկնարկային գինը.
   4) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.
   5) հաղթող ճանաչված մասնակցի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.
   6) լոտի գնման գինը:
   7) աճուրդը չկայանալու մասին:
41. Եթե հաղթող ճանաչված մասնակիցն արձանագրության վերաբերյալ առարկություններ ունի, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:
42. Ընդհանուր աճուրդի դեպքում արձանագրությունը կարող է կազմվել աճուրդի ընթացքում: Լոտն աճուրդում վաճառելուց հետո տվյալ լոտի նկատմամբ հաղթող ճանաչված մասնակիցը իրավիրվում է արձանագրությունն ստորագրելու:
43. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցն աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելուց հետո 5 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտի գինը՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Լոտի գինը վճարելու համար աճուրդի հաղթողին տրվում է վճարման հանձնարարագիր 2 օրինակից, որոնցից մեկը մնում է համալսարանում: Հանձնարարագրում նշվում է գնորդի կողմից մուծման ենթակա գումարի չափը և մուծման վերջին ժամկետը:
44. Աճուրդում հաղթած անձի հետ պայմանագիր կնքելիս նրա մուծված նախավճարի գումարը հաշվարկվում է կնքված պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:
45. Օգտագործված տրանսպորտային միջոցի օտարումից ստացված հասույթը ձևակերպվում են ֆինանսական գործունեության արդյունքներով և ստացված շահույթը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերը վճարելուց հետո ուղղվում են հիմնական ու շրջանառու միջոցների ձեռք բերմանը:
46. Աճուրդում հաղթողի հետ արձանագրության ստորագրման պահից նրան է անցնում գնված լոտի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը: Առուվաճառքի պայմանգիրը կնքվում է աճուրդում հաղթողի և համալսարանի միջև լոտի գինը վճարելուց

անմիջապես հետո 3 օրվա ընթացքում: Տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքը համարվում է փոխանցված պայմանագրի գրանցման պահից: Պայմանագիրը կնքելուց հրաժարվող կողմը մյուս կողմին վճարում է վնասներ և պահանջում դատական կարգով պայմանագիր կնքելուն հարկադրելու մասին:

47. Առուվաճառքի պայամանգրի կնքումից հետո վաճառված տրասնպորտային միջոցը հանվում է համալսարանի հաշվեկշռից և պետավտոտեսչության հաշվառումից:

48. Վաճառված տրանսպորտային միջոցները համալսարանի հաշվեկշռից հանելու հիմքերն են ներքոհիշյալ փաստաթղթերը՝

ա)համալսարանի ռեկտորի հրամանը վաճառված տրանսպորտային միջոցը համալսարանի հաշվեկշռից հանելու մասին,

բ) ավտոտնտեսության վարիչի զեկուցագիրը՝ առուվաճառքի պայմանագիրը կնքելու մասին,

գ) տրանսպորտային միջոցը համալսարանի հետագա կարիքների համար օգտագործման ոչ պիտանիության մասին հանձնաժողովի եզրակացությունը կամ խոտանման ակտը,

դ) տրանսպորտային միջոցի հաշվառումից հանելու մասին պետավտոտեսչության տեղեկանքը,

ե) խոտանված (եթե առկա է) տրանսպորտային միջոցների պիտանի մասերի, ավտոդողերի, էլեկտրակուտակիչների մուտքագրման օրդերը (ֆակտուրան)

զ) ոչ պիտանի մասերի՝ որպես մետաղի ջարդոն (երկրորդային հումք, եթե առկա է) հանձնման մասին տեղեկանքը:

V. Այլ դրույթներ

49. Սույն կարգը հանդիսանում է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի գույքի տնօրինման մասին կարգի անբաժանելի մասը:

50. Սույն կարգը հաստատվում փոփոխվում և լրացվում է համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

51. Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կարգում կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

52. Սույն կարգն ուժի մեջ է մտնում հոգաբարձուների խորհրդի որոշումը ընդունելուց հետո հաջորդ օրվանից:

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝ Գ. Մինասյան

22 դեկտեմբերի 2015թ.

Հոգաբարձուների խորհրդի արձանագրություն № _04__

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Հավ 1

ՀԱՅՏ
ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

_____
(հայտ ներկայացնողի անունը, ազգանունը, անվանումը (եթե ընկերություն է), հասցեն)

_____

1. Ծանոթանալով 2016թ. _____ ___-ին անցկացվելիք աճուրդում վաճառվելիք տրանսպորտային միջոցների մասին տեղեկություններին՝ ցանկանում եմ մասնակցել աճուրդին:
2. Աճուրդում տրանսպորտային միջոց գնելու դեպքում պարտավորվում եմ
   ա) 30 րոպեի ընթացքում ներկայացնել մասնակցի վկայականը և տեղում վճարել առաջարկված գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար.
   բ) 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել տրանսպորտային միջոցի արժեքը.
   գ) 10 օրվա ընթացքում համալսարանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:
3. Համաձայն եմ, որ 10 օրվա ընթացքում համապատասխան գումարը չվճարելու դեպքում իմ կողմից մուծված մասնակցության վճարը և տեղում վճարած առաջարկված գնի առնվազն 5 տոկոսի չափով գումարը չվերադարձվի:
4. Իմ անձնագրի տվյալներն են _____

5. _____

_____ (անունը, ազգանունը) _____ (ստորագրությունը)

Հայտն ընդունված է _____ _____ 2016թ.

Ընդունող _____
(անունը, ազգանունը)

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Ձև 2

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____

ԱՃՈՒՐԴԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աճուրդային հանձնաժողովը՝ ստեղծված՝ _____
_____
(տվյալներ հանձնաժողովի ստեղծման մասին)

կազմով, նախագահ _____
անդամներ _____
_____

որոշեց 2016թ. _____ _____-ին անցկացված աճուրդի արդյունքներով հետևյալ տրանսպորտային միջոցի աճուրդը համարել չկայացած:

N/N ը/կ	տրանսպորտային միջոցի անվանումը	Հասցեն	Մեկնարկային գինը (հազ. դրամ)	Աճուրդում առաջարկված առավելագույն գինը (հազ. դրամ)	Աճուրդի չկայացման պատճառները
1	2	3	4	5	6

Հանձնաժողովի նախագահ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Անդամներ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Ձև 3

Հաստատում եմ

Աճուրդի կազմակերպիչ
հանձնաժողովի նախագահ

_____
(անունը, ազգանունը, պաշտոնը)

__ _____2016թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԼՈՏԵՐՈՎ ԱՃՈՒՐԴԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աճուրդային հանձնաժողովը ստեղծված՝ համաձայն _____
կազմով, նախագահ _____
անդամներ_____
որոշեց 2016թ. ____ _____ -ին անցկացված աճուրդի արդյունքներով ստորև ներկայացված տրանսպորտային միջոցի աճուրդը համարել չկայացած:

N/N ը/կ	Տրանսպորտային միջոցի անվանումը	Մեկ լոտում տրանսպորտային միջոցի թիվը	Մեկ լոտի մեկնարկային գինը (հազ. դրամ)	Աճուրդում առաջարկված առավելագույն գինը (հազ. դրամ)	Աճուրդի չկայացման պատճառները

Հանձնաժողովի նախագահ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Անդամներ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Ձև 4

Հաստատում եմ

Աճուրդի կազմակերպիչ
հանձնաժողովի նախագահ

_____
(անունը, ազգանունը, պաշտոնը)

_____2016թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

_____ 2016թ.

Տրանսպորտային միջոցի՝
1. Անվանումը, _____
2. Աճուրդային վաճառքի հանելու մասին համապատասխան որոշման համարը և տարեթիվը _____
3. Մեկնարկային գինը _____
4. Աճուրդային քայլի չափը _____
5. Աճուրդում առաջարկված առավելագույն (վաճառքի) գինը _____
6. Աճուրդի մասնակիցների թիվը _____
7. Գնորդի վկայականի համարը _____
8. _____
(գնորդի անունը, ազգանունը, անվանումը, անձնագրային տվյալները)
_____
(հասցեն, հեռախոսահամարը կամ ռեկվիզիտները)

Գնորդը _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Աճուրդային հանձնաժողովի նախագահ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Անդամներ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

___ _____ 2016թ.

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Ձև 5

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N___

աճուրդով վաճառքի ձևով _____
(հիմնադրամի անվանումը)
_____
աճուրդի արդյունքների ամփոփման մասին

___ _____2016 թ.

Աճուրդային հանձնաժողովի կազմը՝
Նախագահ _____
(անունը, ազգանունը)
Անդամներ _____
(անունը, ազգանունը)
_____
(անունը, ազգանունը)

Աճուրդն իրականացնել համաձայն
Համալսարանի հոգաբարձուների խորհրդի_____ N _____ որոշման:
(որոշման ամսաթիվը)
Աճուրդի անցկացման օրը _____ _____ 2016թ.
Աճուրդի անցկացման վայրը և հասցեն _____
Աճուրդի ձևով վաճառքի հանված տրանսպորտային միջոցների թիվը _____
_____ հատ:
(քանակը՝ տառերով, թվերով)
Աճուրդի հանված լոտերի թիվը _____
Վաճառված լոտերի թիվը _____
Յուրաքանչյուր վաճառքի հանված լոտ բաղկացած է _____ հատ
բաժնետոմսից՝ _____ դրամ ընդհանուր արժեքով:
Մասնակիցների թիվը _____

Հանձնաժողովը որոշեց հաստատել աճուրդի հետևյալ արդյունքները՝

Լոտի հեր-թական համարը	Լոտի մեկ-նարկային գինը (հազ. դրամ)	Լոտի վաճառքի գինը (հազ. դրամ)	Տեղեկություններ գնորդի մասին (անունը, ազգանունը, հասցեն, իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը)	Գնորդի ստորագրությունը	Գնորդի տոմսի համարը	Ծանոթագրու-թյուններ

1	2	3	4	5	6	7
2.						
3.						
ԸՆԴԱՄԵՆԸ						

Հանձնաժողովի նախագահ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Անդամներ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Վճարված ընդհանուր գումարը _____ դրամ,
(տառերով և թվերով)